ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 253 Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման դրույթները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում կառուցված «Էլիս» ՓՀԷԿ-ի կառուցման աշխատանքները ավարտելու համար «Էլիս ՀԷԿ» ՍՊԸ-ին տալ ավարտական ակտ (շահագործման թույլտվություն):

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 15

ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 254 Ա

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԿՈՂՄԻՑ ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՎՃԱՐՎԱԾ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԸ (ԳԵՐԱՎՃԱՐ) ՀԱՇՎԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի օգոստոսի 3-ի N920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներով, հիմք ընդունելով Վ. Սմբատյանի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Քաղաքացի Վարազդատ Ռազմիկի Սմբատյանի կողմից Եղեգիս համայնքի բյուջե վճարված 7500 (յոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումարի չափով գերավճարի հաշվին իրականացնել հաշվանցում (գերավճարը առաջացել է GAZ 3110 I մակնիշի 35PQ227 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը 13/08/2023թ. օտարելու արդյունքում):

2.Հանձնարարել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետին՝ ապահովել գումարի հաշվանցումը հարկ վճարողին պատկանող 10-035-0034-0021, 10-035-0261-0008, 10-035-0018-0049 կադաստրային ծածկագրերով հողամասերի հարկային պարտավորությունների մարմանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 16 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

16 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 255 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 77-րդ հոդվածի 3-րդ մասով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ստորև ներկայացված գույքերը ներկայացնել ավագանու հաստատմանը և գույքագրել Եղեգիսի համայնքապետարանի գույքային հաշվեկշռում՝

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Քանակը /հատ/	Արժեքը	Գումարը/դրամ/
1.	Տպիչ CANON MF3010	1	165000	165000
2.	Տպիչ HP LAZERJET 15W	1	90000	90000
3.	Էլեկտրական տաքացուցիչ	1	6500	6500
4.	Ձայնային համակարգ 8880	1	110000	110000
5.	Աթոռ	10	14600	146000
6.	Պրոցեսոր G3900 500 GB 4GB	1	128500	128500
7.	Մոնիտոր LG	1	107900	107900
8.	Պրոցեսոր i7512 SSD 16 GB	1	280000	280000
9	Մոնիտոր DELL S2421	1	123500	123500
10	UPS	1	30000	30000
11.	Ստեղնաշար GENUS	3	6500	19500
12.	Դյուրակիր համակարգիչ LENOVO IDEPAD	1	335000	335000
13.	Պրոցեսոր DU AL CORE G6405,4GB RAM	1	170000	170000
14.	Հովհար MYSTERY 2445	1	10000	10000
15.	Ստեղնաշար GENUS101	1	6000	6000

Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի ոռոգման համակարգի գույքագրման վերաբերյալ՝

Հ/Հ	Բնակավայրի անվանում	Չափի միավոր	Երկարություն	Գումար /դրամ/
1	Վարդահովիտ	մ	1770	12 200 000
	Ընդամենը		**1770**	**12 200 000**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 16 ք. Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 256 Ա

ՀՈՎԻԿ ՄԱՄԻԿՈՆԻ ՄԱԿԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 10035BKWTAEP ծածկագիրը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող քաղաքացի Հովիկ Մամիկոնի Մակարյանի սեփական բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-035-0003-0004, մակերեսը՝ 0,068 հա) տրամադրել Եղեգիս համայնք, գյուղ Շատին 22-րդ փողոց, թիվ 2 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 17 Ք. Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 257 Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Քաղաքացի Արթուր Վալերիկի Սիմոնյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Եղեգիս համայնքի Աղնջաձոր գյուղի վարչական սահմաններում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 10-007-0017-0060) սեփական հողամասի վրա պահեստի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 17 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 258 Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ (ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ) ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Քաղաքացի Հրաչ Վահրամի Գասպարյանին տալ նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք)՝ Եղեգիս համայնքի Քարագլուխ գյուղի վարչական սահմաններում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 10-044-0117-0005) սեփական հողամասի վրա բնակելի տան կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 20 ք.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 259 Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ համայնք Եղեգիս, գյուղ Հերմոն, Սիրանեսի փողոց թիվ 27 հասցեում գտնվող քաղաքացի Սահակ Խաչիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0014-0007) կառուցված ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, նկատի ունենալով, որ ինքնակամ կառույցը կառուցված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի վրա, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում և քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև ելնելով այն հանգամանքից, որ ինքնակամ կառույցի և դրանով զբաղեցված ու սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասի սեփականության իրավունքով տրամադրումը չի հակասում սահմանված կարգով հաստատված գլխավոր հատակագծերի, քաղաքաշինական գոտիավորման նախագծերի, հողերի օգտագործման սխեմաների և քաղաքաշինական ծրագրերի պահանջներին, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 29-ը դեկտեմբերի 2005 թվականի թիվ 2387-Ն որոշման դրույթները, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 10029RPPNQMV ծածկագիրը, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ.-ի թիվ 912-Ն որոշման 2-րդ գլխի 18-րդ կետի բ) ենթակետի դրույթները

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի գյուղ Հերմոն, Սիրանեսի փողոց թիվ 27 հասցեում գտնվող քաղաքացի Սահակ Խաչիկի Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0014-0007) կառուցված ինքնակամ կառուցված 14,9 ք/մ մակերեսով հասարակական նշանակության կառույցը (առևտրի սրահ) ճանաչել օրինական և շինությունների նկատմամբ սեփականատիրոջ սեփականության իրավունքը (կցվում է շինությունների հատակագծերը):

2.Ինքնակամ կառույցները օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2022GC9JLT:

3.Օրինականացման համար սահմանված վճարը շինությունների համար 1 քմ-ը կազմում է 1262 ՀՀ դրամ, ընդհանուր գումարը՝ 25 113,8 ՀՀ դրամ, որը պետք է մուծվի 900 355 113 060 հաշվեհամարին:

4.Անշարժ գույքին տրամադրել Եղեգիս համայնք գյուղ Հերմոն, Սիրանեսի փողոց թիվ 27 հասցեն:

5.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարի՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 20 գ.Եղեգիս

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, ք.Եղեգիս, (0281) 99282, shatin.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023թվականի N 260 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՄՈՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 0.01168ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի դրույթները, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու վայրի հասցեավորման, ինչպես նաև անշարժ գույքի հասցեների ռեեստրի ստեղծման և վարման կարգը սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշումը, կադաստրի կոմիտեի կողմից հաստատված հայտի քաղվածքի 100294YMBKGB ծածկագիրը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Եղեգիս համայնքի Հերմոն գյուղի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 0.01168հա բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողամասին (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0014-0008-ից) տալ ՀՀ Վայոց ձորի մարզ Եղեգիս համայնք, գ. Հերմոն Սիրանեսի փողոց, թիվ 27/1 հասցեն:

2.Եղեգիս համայնք, գյուղ Հերմոն Սիրանեսի փողոց, թիվ 27/1 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր՝ 10-029-0014-0008-ից, հողամասի չափը՝ 0.01168հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման) Եղեգիս համայնքին սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ կառուցված շինությունը (մակերեսը՝ 25.7ք/մ) համարել Եղեգիս համայնքի սեփականություն և այն ճանաչել օրինական (կցվում է շինության և հողամասի հատակագիծը):

3.Ինքնակամ կառույցը օրենքով սահմանված կարգով հաշվառված է ՀՀ կադաստրի կոմիտեի էլեկտրոնային բազայում: Չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրն է՝ 2022GM5TM6:

4.Առաջարկել Եղեգիս համայնքի ավագանուն սույն որոշման 2-րդ կետում նշված օրինականացված շինությունը և 0.01168 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով ձեռք բերելու առաջարկ

կատարել կառույցն իրականացրած Սահակ Խաչիկի Հովհաննիսյանին, և առաջարկել նրան.

ա) Վճարելու ինքնակամ կառուցված 25.7քմ հասարակական նշանակության շինության համար՝ ընդամենը 145950,3 (մեկ հարյուր քառասունհինգ հազար ինը հարյուր հիսուն ամբողջ երեք տասնորդական) ՀՀ դրամ, հաշվի առնելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ և 5-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետերով սահմանված շինության տարածագնահատման (գտնվելու վայրի) գոտիականության գործակիցը:

բ)Վճարելու 0.01168հա բնակավայրերի նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը հասարակական կառուցապատման հողամասի արժեքը՝ 60199,92 ՀՀ դրամ, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2006թվականի թիվ 912-Ն որոշմամբ սահմանված կարգի IV. գլխի 33.1. կետի բ) ենթակետը և 33.2. կետը:

գ)Վճարելու համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

5.Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:

6.Ավագանու որոշման ընդունման օրվանից, ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից 15 աշխատանքային օրվա ընթացքում նախատեսված գնման նախապատվության առաջարկը չընդունվելու, կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա սպասարկման համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում, նշված կառույցները և դրանց սպասարկման համար անհրաժեշտ 0.01168հա հողամասը կվաճառվի աճուրդով՝ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

7.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից վեց ամսվա ընթացքում, կամ դատական կարգով երկամսյա ժամկետում:

8.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԹՈՒՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ**

2023 թ. նոյեմբերի 20 ք.Եղեգիս